ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հունիս 2026թ.

ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

2026թ. հունիսի 15-ին Թաթուլ Մովսիսյանը ընտրվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ՝ մինչև 2029թ. հունիսը ժամկետով:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հունիսին գումարվել է Պալատի խորհրդի **2 նիստ՝ 15.06.2026թ.-ին և 25.06.2026թ.-ին:**
15.06.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 5 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի խորհրդի նոր կազմի վերաբերյալ հայտարարության, Պալատի նախագահի ընտրության, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու մասին որոշումները:
25.06.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի փորձագետ հաշվապահի որակավորման դիմումը մերժելու, Պալատի խորհրդի 02.02.2023թ. N2_Լ որոշումը փոփոխելու, Պալատի անդամ «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է **3 նիստ՝ 04.06.2026թ.-ին, 17.06.2026 թ.-ին, և 25.06.2026թ.-ին**, որոնցում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 2 անձի, աուդիտորի որակավորում՝ 4 անձի, փորձագետ հաշվապահի որակավորում՝ 9 անձի, մերժվել է փորձագետ հաշվապահի որակավորման շնորհման մեկ դիմում և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է **1 նիստ 12.06.2026թ.**-ին, որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 12 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին որպես փորձագետ հաշվապահներ:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

17.06.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ասանեթ Ալոյանը:**



18.06.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Արհեստական բանականության (ԱԲ) գործիքների խորացված կիրառումը հաշվապահությունում, աուդիտում և ամենօրյա աշխատանքում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Սամվել Մարտիրոսյանը:**

22.06.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Տաթևիկ Կարապետյանը:**



26.06.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Հասույթի աուդիտի առանձնահատկությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Էմիլ Վասիլյանը:**



30.06.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Տվյալահեն և շարունակական աուդիտ՝ ընտրանքային ստուգումից դեպի տվյալների ամբողջական վերլուծություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**



Որակավորման շնորհում

Ս.թ. հունիսի 26-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած մասնագետների որակավորման վկայականների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը մասնակցում էին Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը և որակավորում ստացած մասնագետները:

Ողջունելով մասնակիցներին՝ Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը շնորհավորեց նրանց որակավորման կրթական ծրագրի հաջող ավարտի կապակցությամբ՝ նշելով, որ որակավորման վկայականը նրանց մասնագիտական զարգացման կարևոր ձեռքբերումն է և միաժամանակ նոր պատասխանատու փուլի սկիզբը: Նա ընդգծեց, որ որպես Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ապագա անդամներ՝ նրանք իրենց կարևոր ներդրումը կունենան մասնագիտության զարգացման, հեղինակության բարձրացման և Պալատի առաքելության իրականացման գործում:

Թ. Մովսիսյանը կարևորեց նաև շարունակական մասնագիտական զարգացման նշանակությունը՝ նշելով, որ Պալատը շարունակելու է աջակցել իր անդամներին՝ կազմակերպելով վերապատրաստումներ, սեմինարներ և նոր ձևաչափով արտագնա ՇՄԶ դասընթացներ՝ արդիական թեմաներով և ոլորտի առաջատար մասնագետների մասնակցությամբ: Նա անդրադարձավ նաև Պալատի անդամ որակավորված մասնագետների համար օրենսդրությամբ նախատեսված մասնագիտական հնարավորություններին և արտոնություններին:

Հանդիսավոր պայմաններում Պալատի նախագահը որակավորման վկայականներ հանձնեց աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած 20 մասնագետների:
Մասնակիցներին շնորհավորանքի և հաջողության մաղթանքի խոսքեր ուղղեց նաև Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատը մշտապես կարևորում է իր անդամների մասնագիտական աճը, փոխադարձ շփումները, համախմբվածությունը և ակտիվ համայնքային կյանքը: Հաջողակ մասնագետը պետք է ունենա նաև առողջ ապրելակերպ, թիմային աշխատանքի մշակույթ և նոր միջավայրերում սեփական կարողությունները դրսևորելու հնարավորություն: Այս գաղափարներից ելնելով՝ Պալատը նախաձեռնում է իր անդամների համար սպորտային խմբերի ձևավորում և ընկերական մրցաշարերի կազմակերպում՝ նպատակ ունենալով ստեղծել նոր շփումների, առողջ մրցակցության, թիմային ոգու և հաճելի ժամանցի հարթակ:
Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հիլզ» սպորտային համալիրի հետ, որտեղ ապահովված կլինեն բոլոր անհրաժեշտ պայմանները մրցումները բարձր մակարդակով, կազմակերպված, հետաքրքիր և դիտարժան անցկացնելու համար:

Սկզբնական փուլում նախատեսվում է ձևավորել ֆուտբոլի և վոլեյբոլի խմբեր, սակայն կդիտարկվեն նաև այլ մարզաձևերի վերաբերյալ առաջարկությունները: Հատկանշական է, որ սպորտային խմբերի ձևավորումը և խաղերի կազմակերպումն իրականացվում է Պալատի կողմից և ամբողջությամբ անվճար է Պալատի անդամների համար: Ծրագրի մեկնարկը՝ հուլիսի 15-ից: